

ՂԱՏԱՐԱՆԻ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ

*ՀՀ գլխավոր դատախազության իրավական
ապահովման և եվրահետեզրման
բաժնի ավագ դատախազ,
իրավագիտության թեկնածու, դոցենտ*

Երածություն: ՀՀ Սահմանադրությունը՝ որպես նոր ձևավորվող իրավական համակարգի հիմքը, բովանդակում է հիմնարար և ժողովրդավարական բնույթի մի շարք դրույթներ, որոնցից շատերը, լինելով սուբստանցիոնալ-իրավական, վերաբերում են դատական իշխանության մարմիններին և նրանց գործառույթներին:

Արդարադատության ոլորտում իրավական քաղաքականություն իրականացնելիս անհրաժեշտ է ղեկավարվել դատական իշխանության մարմինների կարգավիճակի վերաբերյալ սահմանադրական դրույթներով, քանի որ՝ «1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրանում ամրագրված սկզբունքները պարտադիր են ճյուղային օրենսդրության համար, 2. Սահմանադրությունը սահմանում է դատարանների կազմակերպման և գործունեության հիմնական սկզբունքները, որոնք դատական հիմնարկների ստեղծման և նրանց գործունեության ընթացակարգերի մշակման ժամանակ ծառայում են որպես ելակետային դրույթներ, 3. դատարանների կազմակերպման և գործունեության հիմնական սկզբունքները, որպես կանոն, ամրագրված են Սահմանադրության մեջ, իսկ որոշ դրույթներ տրամաբանորեն բխում են Սահմանադրությունից»¹: «Արդարադատությանը վերաբերող սահմանադրական սուբստանցիոնալ դրույթները հետագա զարգացում են ստանում արդարադատության առանձին ձևերը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերում՝ որպես

դատավարության սկզբունքներ»²:

Դատական իշխանության մարմինների սահմանադրական կարգավորումը պայմանավորված է մասնավորապես՝ 1. պետական իշխանության ողջ համակարգի (այդ թվում՝ դատական) ինստիտուցիոնալ գործունեությունը միասնական՝ սահմանադրական օրինականության սկզբունքով կառուցելու անհրաժեշտությամբ, 2. պետական իշխանության միասնական համակարգում դատական իշխանության՝ որպես պետության սոցիալական կարևորագույն գործառույթներ իրականացնող ինստիտուտի կայուն շարունակականությունը, ինչպես նաև արդարադատության անդառնալիությունն ապահովելու նպատակով, 3 «զսպումների և հակակշիռների» համակարգի գործադրման անխախտելիությունը երաշխավորելու նպատակով: Սահմանադրական ճարտարապետության առանցքային խնդիրն էլ հենց այն է, որ երաշխավորվի իշխանության թևերի գործառնական հավասարակշռությունը դինամիկայում: Դրա համար սահմանադրական ամեն մի գործառնական լիազորություն պետք է հակակշռված ու զսպված լինի իշխանության այլ թևերի համապատասխան լիազորություններով³:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված չէ «դատարանի հայեցողական լիազորություն» կամ «դատական հայեցողություն» հասկացությունը, սակայն սահմանադրական մի շարք նորմերի համակարգային կապերից բխում է դատարանի հայեցողական լիազորությունների առկայությունը: Կարծում ենք՝ դատարանի հայեցողական լիազորությունների սահմանադրաիրավական հիմքերը բխում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ արտացոլված հետևյալ դրույթներից՝

1. Իշխանության բաժանման և հավա-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

սարակչոճման համակարգում դատական իշխանության ինքնուրույնությունը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մաս),

2. մարդու դատական պաշտպանության իրավունքը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մաս),

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերի անմիջական գործողությունը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս) :

Սույն աշխատանքում կքննարկենք դատական իշխանության ինքնուրույնությունը և դատական պաշտպանության՝ մարդու սահմանադրական իրավունքը՝ որպես դատարանի հայեցողական լիազորությունների սահմանադրական հիմք (1), ՀՀ Սահմանադրության նորմերի անմիջական գործողության ազդեցությունը դատարանի հայեցողական լիազորությունների իրականացման ոլորտում (2):

Դատական իշխանության ինքնուրույնությունը և դատական պաշտպանության՝ մարդու սահմանադրական իրավունքը՝ որպես դատարանի հայեցողական լիազորությունների սահմանադրական հիմք:

Դատական իշխանության ինքնուրույնության սահմանադրաիրավական սկզբունքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածում ուղղակի ամրագրված չէ, սակայն այն բխում է իշխանության բաժանման և հավասարակշռման սահմանադրական սկզբունքից: Ասվածը հիմնավորվում է ինչպես սահմանադրական իրավունքի տեսության մեջ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի տրված մեկնաբանությամբ, այնպես է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով: Այսպես, Հայաս-

տանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանություններում արդարացիորեն նշվում է, որ մեկնաբանվող դրույթների նորմատիվ բովանդակությունն առաջին հերթին բխում է Հայաստանում պետական իշխանության միասնությունից. դիտարկվող նորմը հաստատագրում է իշխանության տարբեր մարմինների միջև իշխանական լիազորությունների սահմանազատումը, սահմանում է այդ մարմինների ինքնուրույնությունն իրենց լիազորությունների իրականացման գործում և նրանց՝ մեկը մյուսի իրավասության ոլորտ ներխուժելու անթույլատրելիությունը⁴:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասի լույսի ներքո դատական իշխանության ինքնուրույնության սահմանադրաիրավական սկզբունքի և դրա՝ որպես դատարանի հայեցողական լիազորությունների սահմանադրաիրավական հիմքի վերաբերյալ մեկնաբանությունը հանդիպում է նաև սահմանադրական արդարադատության պրակտիկայում: Այս հարցի առնչությամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը ՍԴՈ-690 որոշման 11-րդ և ՍԴՈ-832 որոշման 9-րդ կետերում արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, այդ թվում՝ նաև ՀՀ վճռաբեկ դատարանին, իր գործառական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված ՀՀ Սահմանադրության 5 հոդվածի երկրորդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ: Այս դիրքորոշման համատեքստում պետական ցանկացած մարմնի կարող է տրվել այս կամ այն լիազորությունը, որն անհրաժեշտ է նրա առջև դրված խնդիրները լիարժեք լուծելու համար, եթե դրանք համապատասխանում են տվյալ մարմնի սահմա-

նադրաիրավական կարգավիճակին և սահմանադրորեն ամրագրված ու երաշխավորված արժեքներին»:

Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը 12.03.2001թ. որոշմամբ ուղղակիորեն սահմանել է.

«Դատական իշխանության ինքնուրույնության սկզբունքի ուժով օրենսդիրը իրավասու չէ դատարանին զրկելու արդարադատության իրականացման համար անհրաժեշտ հայեցողական լիազորություններից»:

Միջազգային որոշ փաստաթղթերում դատարանի հայեցողական լիազորությունները դիտվում են որպես դատական մարմինների անկախության ապահովման միջոց: Այսպես, ՄԱԿ-ի 1985 թ. ընդունած՝ «Դատական մարմինների անկախության սկզբունքները» բանաձևում նշվում է, որ դատարանները իրավասություն ունեն դատական բնույթի ցանկացած հարցի նկատմամբ և բացառիկ իրավունք ունեն որոշելու, թե արդյոք իրենց ներկայացված գործը ընդգրկվում է օրենքով նախատեսված իրավասության մեջ: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և դերի մասին» 1994թ. հոկտեմբերի 13-ի թիվ (94) 12 հանձնարարականի առաջին սկզբունքի 2-րդ կետի (d) ենթակետում նշվում է, որ դատավորները պետք է ունենան անսահմանափակ ազատություն՝ անաչառորեն ընդունելու որոշումներ՝ ղեկավարվելով իրենց խղճով, փաստերի իրենց մեկնաբանությամբ և գործող իրավանորմերով: Դատավորները իրենց գործերի էության վերաբերյալ չպետք է տեղեկատվություն տրամադրեն դատական համակարգից դուրս գտնվող որևէ անձի:

Այսպիսով, դատական իշխանության ինքնուրույնության սահմանադրաիրավական սկզբունքը ենթադրում է դատարանի այնպիսի լիազորությունների առկայություն, որոնց բովանդակությունը կապված է որոշակի հայեցողության հետ և հա-

կակշռում է օրենսդիր իշխանության մարմնի լիազորությանը՝ սահմանափակելու դատական իշխանության մարմինների իրավասությունները: Օրենսդիր մարմնի կողմից չեն կարող սահմանվել դատարանի իրավասությանը ենթակա գործերի սպառիչ ցանկ կամ որևէ իրավական վեճ դատարանի կողմից քննելու վերաբերյալ իրավական արգելքներ, եթե դատարանը սահմանադրական նորմի մեկնաբանման հիման վրա որոշում է, որ այդ գործերը գտնվում են դատարանի իրավասության ներքո»:

Օրենսդրի կողմից իրավական խնդրի նկատմամբ դատական իշխանության մարմինների իրավասության սահմանափակումը ուղղակիորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված մարդու դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի հետ: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ 08.11.2008թ. որոշմամբ ՍԴՈ-765 12 կետում նշվում է.

«ՀՀ Սահմանադրության 18 և 19 հոդվածներն ամրագրում են անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, այդ թվում՝ նաև արդարադատության մատչելիության իրավունքը»:

Իհարկե, դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները բացարձակ չեն և իրավական որոշակի պայմանների առկայության դեպքում կարող են սահմանափակվել, ինչը հաստատվել է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում և Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 18.10.2006թ.-ի ՍԴՈ-652 որոշման 6-րդ կետում քրեական հետապնդման մարմնի որոշումները դատարան բողոքարկելու ժամկետային սահմանափակման առումով նշել է.

«Պետության կողմից օրենքով սահման-

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ված ժամկետային սահմանափակումների առումով համահունչ են ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածով երաշխավորված դատական քննության մատչելիության և արդար դատաքննության իրավունքներից: Ժամկետային սահմանափակման նպատակն է պահպանել իրավական որոշակիությունը և ապահովել, որպեսզի գործերը վերանայվեն ողջամիտ ժամկետներում: Օրենսգիրքը պարտավորեցնում է քրեական վարույթ իրականացնող մարմիններին հանցագործությունը և այն կատարած անձանց բացահայտել սեղմ ժամկետներում, ինչպես նաև նախատեսվում է այդ ուղղությամբ իրականացված գործողությունների և ընդունված որոշումների բողոքարկման սեղմ ժամկետներ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է այս հարցին և նշել.

«Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է մատչելիության իրավունքը, բացարձակ իրավունք չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես՝ բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությանը պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջումներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6

հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների, և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն» (Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995):

Դատական իշխանության մարմինների ինքնուրույնությունը և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը սահմանափակող օրենսդրական նորմերի սահմանադրականությունը կամ միջազգային չափանիշների համապատասխանելիությունը գտնվում են դատական իշխանության իրավասու մարմինների վերահսկողության ներքո: Դատական իշխանության մարմիններն օժտված են հայեցողական լիազորությամբ որոշելու, թե օրենսդրի կողմից դատական իշխանության մարմինների իրավասությունների սահմանափակումը արդյոք հետապնդում է իրավաչափ նպատակ, արդյոք նման սահմանափակումը բավարարում է իրավական որոշակիության պահանջներին, և արդյոք այն անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Օրինակ՝

Օ. Բ-ն և Ս. Հ-ն ՀՀ տնտեսական դատարան հայց են ներկայացրել ընդդեմ «Կրեդիտ -Երևան բանկ» ընկերության ժամանակավոր արդմինիստրացիայի և ՀՀ կենտրոնական բանկի՝ ժամանակավոր ադմինիստրացիայի կողմից մշակված առողջացման ծրագրի դրույթներն անօրինական ճանաչելու և դրա գործողությունները կասեցնելու պահանջով: ՀՀ տնտեսական դատարանը 23.12.2002թ. վճռով գործի վարույթը կարճել է՝ հղում կատարելով «Բանկերի սնանկության մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի⁶ վրա, ըստ որի՝ կենտրոնական բանկի խորհրդի՝ ֆինանսական առողջաց-

ման ծրագիրը հաստատելու մասին որոշումը ենթակա չէ դատական կարգով բողոքարկման: ՀՀ վճռաբեկ դատարանի պալատը, վերլուծելով մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք միջազգային պայմանագրերի դրույթներ, սույն գործով եզրակացրել է, որ ՀՀ օրենսդրությամբ բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ակտերը ենթակա են դատական քննության, և 28.02.2003 թ. որոշմամբ բեկանել է տնտեսական դատարանի 23.12.2002 թ. վճիռը:

Նշենք դատական քաղաքականության սուբյեկտների կողմից դատարանի քննարկմանը ենթակա գործերի շրջանակը որոշելու հայեցողական լիազորության մեկ այլ օրինակ: Քրեական հետապնդման մարմնի որոշումների և գործողությունների՝ դատարան բողոքարկելու կարգը սահմանված է մասնավորապես Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 290 հոդվածով, որի երկրորդ մասը ուղղակիորեն թվարկում է այն որոշումները, որոնք կարող են դատական կարգով բողոքարկվել՝ հանցագործության վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց հրաժարվելը, քրեական գործ հարուցելուց հրաժարվելը, քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները: Հայաստանի Հանրապետության ՀՀ քր. դատ. օր.-ի 290 հոդվածում քրեական գործ հարուցելու մասին որոշման բողոքարկման մասին չի նշվում: Այս որոշման դատական կարգով բողոքարկման վերաբերյալ դրույթ բացակայում է նաև Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 182 հոդվածում (քրեական գործ հարուցելու կարգը): Այս կապակցությամբ ծագում է հետևյալ հարցադրումը. Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 290 հոդվածի 2-րդ մասում քրեական գործ հարուցելու մասին որոշման դատական բողոքարկման վերաբերյալ դրույթի բացակայությունը արդյո՞ք նշանակում է, որ այն չի կարող դատական

կարգով բողոքարկվել: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը 25.09.2008 թ.-ի որոշմամբ լուծել է Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 2-րդ մասում չնախատեսված որոշումների, այդ թվում՝ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական կարգով բողոքարկելու թույլատրելիության հարցը:

Այսպես, նշված գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, 06.05.2008 թ.-ի որոշմամբ անթույլատրելի համարելով քրեական գործ հարուցելու մասին որոշման՝ դատական կարգով բողոքարկումը, իր որոշումը հիմնավորել է հետևյալ պատճառաբանությամբ.

«Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրավական կարգավորումները տրված են ՀՀ քր. դատ. օր.-ի 39-րդ գլխում, որի մեջ է ներառված նաև օրենսգրքի 290-րդ հոդվածը: Նշված գլխի 278-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ մինչդատական վարույթում քրեական հետապնդում իրականացնող մարմինների ոչ բոլոր գործողությունները և որոշումները կարող են բողոքարկվել դատարան: Բողոքարկման ենթակա որոշումների ցանկը օրենսդիրը նախատեսել է քր. դատ. օր.-ի մի շարք հոդվածներում, այդ թվում նաև 290-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ դատարան կարող են բողոքարկվել հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն ընդունելուց, քրեական գործ հարուցելուց հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի հրաժարվելը, ինչպես նաև քրեական գործը կասեցնելու, կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումները՝ դարձյալ օրենսգրքով նախատեսված դեպքերում: Իսկ նույն հոդվածի 1-ին մասը սահմանում է օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների դեմ բողոքները դատարան ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, և առաջադրում պայման՝ որ նրանց բողոքները պետք է

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

բավարարված չլինեն դատախազի կողմից: Այստեղից հետևում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության առարկա չի կարող լինել, քանի որ դատական կարգով այդպիսի որոշման բողոքարկում ոչ ՅՅ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածով, ոչ քրեական գործ հարուցելու կարգը սահմանող 182-րդ հոդվածով և ոչ էլ որևէ այլ հոդվածով նախատեսված չէ»:

Նշված գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն արդարացիորեն չի համաձայնվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ դատարանի պատճառաբանությանը և նշել.

«Քրեական գործ հարուցելու մասին որոշումը դատական վերահսկողության ոլորտից բացառելը միայն այն հիմնավորմամբ, որ ՅՅ քր. դատ. օր.-ի որևէ հոդվածում սահմանված չէ, որ այն կարող է բողոքարկվել դատական կարգով, թերի է: ՅՅ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ դատական վերահսկողության առարկա կարող են լինել հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների բոլոր այն որոշումները և գործողությունները, որոնք խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը: Անձի իրավունքները և օրինական շահերը խախտելու դեպքում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումները և գործողությունները դատական բողոքարկման առարկա լինելու հանգամանքն ուղղակիորեն բխում է ՅՅ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքից: Ինչը ենթադրում է, որ քրեական գործ հարուցելու մասին որոշումը նույնպես կարող է դատական բողոքարկման առարկա լինել, եթե

այն խախտում է անձի իրավունքները և օրինական շահերը: Ինչ վերաբերում է ՅՅ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 2-րդ մասին, որում թվարկվում են բողոքարկման ենթակա որոշումները, որի վրա հիմնվելով, վերաքննիչ դատարանը հիմնավորել է իր որոշումը, ապա այն ՅՅ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածի 1-ին մասի համեմատ կրում է լրացուցիչ բնույթ, քանի որ նրանում օգտագործվում է «նաև» շաղկապը, ինչը թույլ է տալիս եզրակացնելու, որ նրանում սպառնիչ չի թվարկված դատական կարգով բողոքարկման ենթակա որոշումները»:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը գտել է, որ եթե քր. դատ. օր.-ում հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների դատական կարգով բողոքարկման ուղղակի դեպք և կարգ սահմանված չեն, սակայն այդ որոշումները և գործողությունները խախտում են անձի իրավունքները և օրինական շահերը, ապա Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքի ուժով դրանք ենթակա են դատական կարգով բողոքարկման: Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ և ՅՅ քր. դատ. օր.-ի 290-րդ հոդվածների տված մեկնաբանությունը արդարացված է, քանի որ դժվար է օրենքով սպառնիչ թվարկել այն որոշումները, գործողությունները կամ գործերը, որոնք կարող են գտնվել դատական վերահսկողության ներքո, ուստի պոզիտիվ իրավունքի ոչ դատավարական, ոչ էլ նյութական նորմերով չի կարելի սահմանափակել դատարանի՝ Սահմանադրական նորմերի և միջազգային իրավունքի հիման վրա իրենց քննարկմանը ենթակա գործերը որոշելու հնարավորությունը:

Վերը նշված օրինակներից երևում է, որ դատարանի հայեցողական լիազորութ-

յունները կարող են վերաբերել նաև սեփական իրավասությանը, այսինքն՝ դատարանը հայեցողություն ունի որոշելու իր իրավասության սահմանները: Առաջին հայացքից կարող է թվալ, որ նման մոտեցումը հակասում է՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունները, սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանադրական դրույթին (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մաս): Սակայն դատարանի հայեցողական լիազորությունը՝ որոշելու սեփական իրավասության սահմանները, վերաբերում է ոչ թե այն դեպքերին, երբ դատական իշխանության մարմինները իրենց համար սահմանում են Սահմանադրությամբ և օրենքով չնախատեսված գործառույթներ կամ լիազորություններ, այլ իրենց սահմանադրական գործառույթների և լիազորությունների շրջանակում որոշելու իրենց իրավասության ներքո գտնվող իրավական հարցերի շրջանակը, ընդհուպ այն դեպքերի, երբ օրենսդրի կողմից արգելվել է իրավական հարցի դատական քննարկումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ մարդու դատական պաշտպանության իրավունքի իրականացումը պահանջում է դատական իշխանության մարմինների իրավասության ենթակա գործերի *լիարժեքության* ապահովում, ինչը նշանակում է, որ մարդուն դատական պաշտպանության միջոց պետք է տրամադրվի նույնիսկ այն դեպքերում, երբ օրենսդրությամբ բացակայում են նյութաիրավական նորմի իրականացման ընթացակարգերը, կամ դրանք ոչ բավարար չափով են կարգավորված⁷: Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ դատարանը հայեցողական լիազորությունների կիրառմամբ ապահովում է դատավարության մասնակիցներին օրենքով տրված իրավունքների իրականացումը, երբ բացակայում է այդ նորմի իրականացման դատա-

վարական ձևը: Այսպես, Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր-ի 137-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կալանավորման մասին որոշում կայացնելիս դատարանը միաժամանակ լուծում է մեղադրյալին գրավով կալանքից ազատելու հնարավորության հարցը և, ճանաչելով նման ազատման հնարավորությունը, նշանակում է գրավի գումարը: Հետագայում դատարանը կարող է պաշտպանության կողմի միջնորդությամբ վերանայել գրավի անթույլատրելիության կամ գրավի գումարի մասին որոշումը: Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր-ը չի սահմանում գրավի անթույլատրելիության մասին որոշման վերանայմանը վերաբերող պաշտպանության կողմի միջնորդության քննարկման դատավարական կարգը: Այս միջնորդությունը գործնականում քննարկվում է Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր-ի 283-րդ հոդվածի կարգով, ինչը ոչ այլ ինչ է, քան դատավարական օրենքի զուգորդություն (անալոգիա)⁸:

Դատավարական օրենքի անալոգիայի կիրառումը՝ որպես դատարանի հայեցողական լիազորություն, բխում է նաև դատական իշխանության ինքնուրույնության մասին սահմանադրաիրավական սկզբունքից: Այսպես, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը 16.03.2006թ.-ի որոշմամբ նշել է.

«Օրենքի անալոգիայի կիրառումը պայմանավորված է իրավական կարգավորման բացերի լրացման անհրաժեշտությամբ: Այդպիսի իրավունքի ամրագրումը բխում է դատական իշխանության ինքնուրույնության սկզբունքից և հանդիսանում է դատարանի հայեցողական լիազորության դրսևորումներից մեկը, որն անհրաժեշտ է արդարադատության իրականացման համար, քանի որ, ըստ անալոգիայի իրավական նորմի կիրառման, անհնարինությունը կհանգեցնի քաղաքացու իրավունքների պաշտպանության անհնարինությանը և, վերջին հաշվով, մարդու իրավունքների սահմանափակմանը»:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս առումով մարդու դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մաս) և դատական իշխանության ոլորտում օրինականության սահմանադրական սկզբունքի (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մաս) հավասարակշռության և զուգակցման ապահովման տեսանկյունից՝ դատական և դատավարական օրենսգրքերում դատավարական զուգորդության (անալոգիայի) թույլատրելիության և դրա սահմանների վերաբերյալ նորմի նախատեսումը դառնում է սահմանադրական պահանջ:

ՀՀ Սահմանադրության նորմերի անմիջական գործողության վերաբերյալ դրույթը դատարանի հայեցողական լիազորությունների սահմանադրական հիմքերից է: Սահմանադրության՝ որպես գործող իրավունքի նոր ընկալումը թույլ է տալիս դատարանների գործունեությունը դիտարկել իրավակիրառման նոր հարթությունում, այն է՝ սահմանադրական իրավակիրառման տեսանկյունից:

Սահմանադրության նորմերի անմիջական գործողության պահանջը Սահմանադրության գերակայության ուղղակի հետևանքն է: Սահմանադրության գործողությունը չի կարող պայմանավորված լինել այն կիրառելու (իրականացնելու) վերաբերյալ որևէ այլ իրավական ակտի առկայությամբ: Սահմանադրությունը տեսականորեն պետք է գործի նույնիսկ այն ժամանակ, եթե այն կիրառելու վերաբերյալ որևէ այլ իրավական ակտ գոյություն էլ չունենա: Սակայն իրականում խոսքը Սահմանադրության այն նորմերի մասին է, որոնք կարող են կատարվել առանց դրանք միջնորդավորող իրավական ակտերի: Այն, մասնավորապես, վերաբերում է սահմանադրական հիմնարար սկզբունքներին՝ ժողովրդավարություն, իրավական և սոցիա-

լական պետություն և այլն, ինչպես նաև մարդու այնպիսի իրավունքներին, որոնց իրականացումը չի կարող պայմանավորվել որևէ օրենքի առկայությամբ, օրինակ՝ արժանապատվության իրավունքը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդված), ընդհանուր ազատության իրավունքը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ մաս), խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 17-րդ հոդված), մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26-րդ հոդվածի 1-ին մաս) և այլն: Սակայն պարզ է, որ որոշ դեպքերում առանց Սահմանադրությունը կենսագործող իրավական ակտերի Սահմանադրությամբ ամրագրված դրույթների գործողությունն անհնարին է: Այսպիսով, պարզ է, որ եթե Սահմանադրության գերակայության սկզբունքը ենթակա է անվերապահ կատարման, ապա անմիջական գործողության վերաբերյալ դրույթն ունի ավելի հարաբերական բնույթ և պետք է իրականացվի Սահմանադրության ավելի հատուկ դրույթների հաշվառմամբ: Այս կանոնից բացառությունները՝ որպես հատուկ դրույթներ, բնականաբար, գերակայում են դրա կատմամբ⁹:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ որպես հասարակական հարաբերությունների անմիջական կարգավորիչի գործառույթն այսպես թե այնպես կրում է սուբսիդիար բնույթ, քանի որ սահմանադրական նորմերը թեև ունեն բարձր իրավաբանական ուժ, սակայն նրանք նախատեսված չեն ճյուղային ոլորտները համալիր կարգավորելու համար: Ուստի սահմանադրական նորմերի անմիջական գործողության տիրույթը, որոշակի առումով, սահմանափակ է: Տեսության մեջ առանձնացվում է ճյուղային կարգավորման հարթությունում սահմանադրական նորմերի անմիջական գործողության հետևյալ իրավիճակները՝ իրավունքի

բացերի լրացում, ճյուղային նորմերի սահմանադրական մեկնաբանություն, սահմանադրությանը հակասող նորմերի վերացում¹⁰:

Անկախ ճյուղային ոլորտում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերի անմիջական գործողության վերաբերյալ տեսության մեջ առկա մոտեցումներից՝ մի բան հստակ է. մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը՝ որպես նախնական պայման, չի պահանջում ճյուղային իմպլեմենտացիա: Բ. Երզեւր արդարացիորեն նշում է, որ դատարանը, ինչպես նաև պետական իշխանության այլ մարմինները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտպանել մարդու իրավունքները անկախ այն բանից՝ Սահմանադրության նորմերը ճյուղային օրենսդրության մեջ կոնկրետացված են, թե՞ ոչ¹¹:

Սահմանադրության նորմերի անմիջական գործողությունն անհրաժեշտ է հատկապես այն դեպքերում, երբ պոզիտիվ իրավունքում առկա են սահմանադրականության առունով վնասակար իրավական բացեր: Ինչպես նշվեց, հայեցողական լիազորությունները դատարանին հնարավորություն են տալիս իրականացնել մարդու իրավունքների պաշտպանություն նույնիսկ այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից սահմանված չեն մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների իրականացման կամ պաշտպանության կարգը, կամ առկա է հակասական կարգավորում: Այս առումով, դատարանի հայեցողական լիազորությունները և դրանց սահմանադրական հիմքերը հնարավորություն են տալիս բացառելու այնպիսի իրավիճակներ, երբ, օրինակ, 1978 թ. Սահմանադրությամբ նախատեսված՝ պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկման մասին իրավունքը գրեթե 15 տարի չիրականացվեց, քանի որ օրենքով սահմանված չէր պաշտոնատար անձանց գործողությունները բողոքարկելու ընթացակարգը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել՝

1. Դատարանի հայեցողական լիազորությունները դատական իշխանության մարմինների սահմանադրավական կարգավիճակի անբաժանելի մասն են, որոնց առկայությամբ ապահովվում է դատական իշխանության մարմինների ինքնուրույնությունը, երաշխավորվում մարդու դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը և իրավակիրառ պրակտիկայում իրականացվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերի անմիջական գործողության սահմանադրական պահանջը:

2. Դատարանների սահմանադրավական կարգավիճակից բխում է նրանց հայեցողական լիազորությունը՝ իրենց սահմանադրական գործառույթների և լիազորությունների շրջանակում որոշելու դատական իրավասության ներքո գտնվող իրավական հարցերի շրջանակը նույնիսկ այն դեպքերում, երբ օրենսդրի կողմից արգելվել է իրավական հարցի դատական քննարկումը:

3. Դատավարական օրենքի անալոգիայի կիրառումը՝ որպես դատարանի հայեցողական լիազորություն, բխում է նաև դատական իշխանության ինքնուրույնության սահմանադրավական սկզբունքից և դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից: Ուստի առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի (ինչպես նաև դատավարական ճյուղային օրենսդրությունում) 8-րդ հոդվածում ավելացնել 2-րդ և 3-րդ մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«2 Դատական իշխանության իրականացման ընթացքում ծագած հարաբերությունները կարգավորող դատավարական իրավունքի նորմի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը կիրառում է համանման հարաբերությունները կարգավորող իրավական նորմը (օրենքի զուգորդություն), իսկ այդպիսի նորմի բացակայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը գործում է ըստ արդարա-

Քրեական դատավարություն

դատության սկզբունքների (իրավունքի զուգորդություն):

3. Դատավարական օրենքը զուգորդությամբ չի կարող կիրառվել, եթե դրանով սահմանափակվում են դատավարությանը մասնակցող անձանց իրավունքները և ա-

զատությունները, կամ սահմանվում են նոր դատավարական պարտականություններ կամ դատավարական պատասխանատվության միջոցներ, դատավարական հարկադրանքի տարրեր պարունակող գործողություններ: Ջուզորդության կարգով դատավարական օրենքի կիրառումը չի կարող հակասել սույն օրենսգրքի և դատավարական օրենսդրության սկզբունքներին»:

¹ Конституционные основы правосудия в СССР. Под ред. В.М. Савицкого. М.: 1981. С. 29:

² Ղամբարյան Ա. Արդարադատության սահմանադրաիրավական հիմունքները Հայաստանի Հանրապետությունում: Եր., ՌՀՀ հրատ, 2006, էջ 24:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 91:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 92:

⁵ Տե՛ս Самостоятельность и независимость судебной власти Российской Федерации. Под ред. В. В. Ершова. М.: Юристъ, 2006. С. 121-122 :

⁶ Օրենքի այս դրույթը ուժը կորցրել է:

⁷ Տե՛ս Анишина В.И. Основы судебной власти и правосудия в Российской Федерации. Курс лекций. М.: Эксмо, 2008. С. 226:

⁸ Տե՛ս Гамбарян А.С. Аналогия процессуального закона в Республике Армения. Проблемы уголовно-процессуального права.

Мат-лы международ. науч.-практ. конф., посвящ. 20-летию кафедры уголовного процесса / Отв. ред. А. Н. Ахпанов. Караганда: КЮИ МВД РК им. Б. Бейсенова, 2006. – Вып. 5. 59-63 С., Ղամբարյան Ա., Ոսկանյան Ս. Քրեադատավարական օրենքի անալոգիայի (զուգորդության) թույլատրելիությունը: Օրինականություն, թիվ 53, 2009. էջեր 17-21, Ղամբարյան Ա. Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում: Գիտագործնական ձեռնարկ. Եր., «Օրենք և իրականություն», 2010:

⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 103:

¹⁰ Տե՛ս Толстых В.Л. Прямое действие конституции. <http://www.lawmix.ru/comm/4500/> (27.01.2011).

¹¹ Տե՛ս Эбзеев Б.С. Личность и государство в России: взаимная ответственность и конституционные обязанности. М.: Изд. Норма, 2007, С. 285:

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ОСНОВЫ ДИСКРЕЦИОННОГО ПОЛНОМОЧИЯ СУДА

Артур ГАМБАРЯН

*Старший прокурор Отдела правового обеспечения и евроинтеграции
Генеральной прокуратуры РА, кандидат
юридических наук, доцент*

В статье автор отмечает, что дискреционные полномочия судов являются неотъемлемой частью конституционно-правового статуса органов судебной власти, присутствие которых обеспечивает их независимость, гарантирует конституционное право судебной защиты человека и в правоприменительной практике осуществляет прямое действия конституционных норм РА.

Дискреционные полномочия судов могут касаться и собственной юрисдик-

ции, т.е. суды вправе решать границы своей юрисдикции, что не противоречит конституционному праву о полномочиях государственных органов и должностных лиц, устанавливаемых Конституцией и законом (Конституция РА статья 5-я, часть 2-я), так как в этом случае суд в рамках своих конституционных функций и полномочий устанавливает рамки правовых вопросов, находящихся в его юрисдикции, вплоть до случаев, когда со стороны законодателя запрещается судебное разбирательство правового вопроса.

Из конституционных основ дискреционных полномочий судов следует применение аналогии процессуального права, на основе которой автор предлагает внести поправки и изменения в 8-ю статью судебного кодекса РА.